ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 25.07.2019թ.
ժամը 12 ⁰⁰

Մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ (ԳԱՊ)
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,
Գնահատողներ՝
- ՀՀ ՋՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման գնման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
- ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱՏ ծառայության շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյան,
Գնումները համակարգող՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի տեղակալ Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակիցների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը քննարկելու և համապատասխանությունը որոշելու մասին.
2. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը քննարկելու և համապատասխանությունը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 Սահմանված ժամկետում **«ԿԱՐՎԱ», «ԱԲԻ», «Սենտրալ», «Իդեալ Թրավել»** և **«ԳԱՎ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ**-ների կողմից ներկայացվեցին փաստաթղթերի շտկված տարբերակները որոնք քննարկելուց հետո ընդունվեցին գնահատող հանձնաժողովի կողմից, իսկ **Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանի** կողմից փաստաթղթերի շտկված տարբերակները չեն ներկայացվել, գնահատող հաննաժողովը հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-N որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները որոշեց **Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանի** կողմից ներկայացված հայտը 18-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել վերջինիս հայտը:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժված 18-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից որոշելու նպատակով 31.07.2019թ-ին հրավիրել բանակցության **«ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ**-ին, քանի որ հաջորդ տեղ զբաղեցնող **«ՎԻ ԷՆ ԷՄ» ՍՊԸ**-ի հայտը մերժվում է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետնանց հարկային պարտավորություն (15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով, որն էլ գերազանցում է Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված շեմը) ունենալու պատճառով, իսկ **«ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ**-ի կողմից առաջարկված գինը գերազանցում է տվյալ չափաբաժնի համար սահմանված նախահաշվային գինը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող 11 և 12-րդ չափաբաժինների մասով **«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի** կողմից ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են և համապատասխանում են բաց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, իսկ **«ՎԻ ԷՆ ԷՄ» ՍՊԸ**-ի կողմից 16-րդ չափաբաժնի մասով ապրանքների ամբողջական նկարագրերը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները որոշեց մերժել վերջինիս հայտը և մերժված 16-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Ժակ և Գոռ» ՍՊԸ**-ն և առաջարկել վերջինիս ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 31.07.2019թ-ին ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Դ. Սերոբյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան